ԵՐԻՏԱՍԱՐԴ ՀԱՅ ԱՐՎԵՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԳԻՏԱԿԱՆ ՎԵՑԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԸ

ՀՀ ԳԱԱ գիտաժողովների տանը 2011 թ. նոյեմբերի 26-27-ին ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի Երիտասարդ արվեստաբանների խորհուրդը գումարեց Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական վեցերորդ նստաշրջանը՝ նվիրված ՀՀ անկախության 20-ամյակին:

Գիտական նստաշրջանի աշխատանքներին մասնակցեցին ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի, ՀՀ գիտակրթամշակութային այլ օջախների՝ Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի, Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի, Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանի, Երևանի պետական համալսարանի, Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի, Հայաստանի պատմության թանգարանի երիտասարդ արվեստաբանները:

Բացման խոսքով հանդես եկավ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Արարատ Աղասյանը. «Կարևորում եմ նմանատիպ նստաշրջանների կազմակերպումը և շարունակականությունը, քանզի դա հնարավորություն է ընձեռում բացահայտելու Հայաստանի Հանրապետությունում առկա երիտասարդ արվեստաբանների ներուժը: Պատահական չէ, որ գիտաժողովը նվիրված է ՀՀ անկախության 20-ամյակին. նստաշրջանի մասնակիցները՝ որպես արվեստաբաններ, ձևավորվել են հենց անկախության շրջանում: Հատկանշական է նաև, որ երիտասարդ գիտնականների ամենամյա գիտական նստաշրջանները ևս սկզբնավորվել են Հայաստանի երրորդ Հանրապետության տարիներին՝ 2005 թվականից»: Ողջունելով գիտական նստաշրջանի մասնակիցներին՝ ՀՀ ԲՈՀ-ի նախագահի տեղակալ, բանասիրական գիտությունների դոկտոր Լիլիթ Արզումանյանը նշեց. «Պետք է հավատանք, որ կգան իրական արժեքների գնահատման ժամանակները, և այսօրվա ձեր յուրաքանչյուր լավ հոդվածը, լավ զեկուցումը մի քար է մեր ապագա ամուր պատի համար…»:

Երկօրյա գիտաժողովի չորս նիստերի ընթացքում ընթերցված 24 զեկուցումներում ներկայացվեցին արվեստագիտության տարբեր գիտաճյուղերը. կերպարվեստ, երաժշտություն, ճարտարապետություն, թատրոն և կինո:

ԿԵՐՊԱՐՎԵՍՏ: *ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի սփյուռքահայ արվեստի բաժնի գիտաշխատող Մերի Կիրակոսյանի (գիտական ղեկավար՝ Ա. Աղասյան) զեկուցումը նվիրված էր Հ. Թումանյանի և Ավ. Իսահակյանի տուն-թանգարաններում պահվող Փանոս Թերլեմեզյանի աշխատանքներին: Բանախոսը թերթեց էջեր Թումանյանի հետ առնչվող նկարչի հուշերից, անդրադարձավ բանաստեղծների տուն-թանգարաններում պահվող Թերլեմեզյանի հինգ աշխատանքներին, որոնցից երեքը մինչ օրս չուսումնասիրված էտյուդային գործեր են: ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի սփյուռքահայ արվեստի բաժնի կրտսեր գիտաշխատող Մարգարիտա Քամալյանը (գիտական ղեկավար՝ Ա. Աղասյան) ներկայացրեց «Գառզուի բեմանկարչությունը. Տիերի Մոլնիեի «Ժաննան և դատավորները» դրաման» բանախոսությունը: Գառզուի կերտած բեմանկարչության հաջողության բանալին, ըստ զեկուցողի, 1960-*

ականներին մեծ տարածում ստացած կոնստրուկտիվիստական կառույցի ստեղծումն էր, նկարչի ուրույն ոճը, ինչպես նաև ներկայացման սցենոգրաֆիկ կերպարի համապատասխանությունը դրամատուրգի ու ռեժիսորի մտահղացմանը: Հայաստանի պատմության թանգարանի բաժնի վարիչ, Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի դասախոս, արվեստագիտության թեկնածու Գրիգոր Գրիգորյանը «Հայաստանի վաղ միջնադարյան կոթողների ակունքները» բանախոսության մեջ քննության առավ պատմագրության ու մասնագիտական գրականության մեջ կոթողներին վերաբերող վկայություններն ու տեսակետները: ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի սփյուռքահայ արվեստի բաժնի կրտսեր գիտաշխատող Մանե Մկրտչյանի (գիտական ղեկավար՝ Ա. Աղասյան) ելույթը սիմվոլիզմի գեղարվեստական մեթոդի և Հակոբ Գյուրջյանի արվեստում դրա արտացոլման մասին էր: Երևանի պետական համալսարանի հայցորդ Հռիփսիմե Վարդանյանը (գիտական ղեկավար՝ Ա. Աղասյան) անդրադարձավ հայ անվանի գծանկարիչ Ռուդոլֆ Խաչատրյանի դիմանկարներին, որոնք բացահայտում են արդեն ծանոթ, սակայն միաժամանակ նոր նկարչին, որը հետևանք է ոչ միայն լնկասի վրա արված նկարի տեխնիկական նորամուծությունների, այլև նկարչի հոգևոր ինքնազարգացման: Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի դասախոս, արվեստագիտության թեկնածու Արմեն Հովեսյանը ներկայացրեց Գառզուի ջրաներկ աշխատանքները: ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի կերպարվեստի բաժնի ասպիրանտ Շադի Ղոմշեհի (գիտական ղեկավար՝ Ալիս Ներսիսյան) զեկուցումը նվիրված էր իրանական կինոազդագրին. պատմական հակիրճ ակնարկում ներկայացվում են կերպարվեստի այդ բնագավառում առավել մեծ ներդրում ունեցող նկարիչների նորամուծությունները, սահմանվում իրանական կինոպլակատի զարգացման երկու հիմնական ուղիները՝ իրենց բնորոշ առանձնահատկություններով: Մաշտոցի անվան Մատենադարանի գիտաշխատող Դավիթ Ղազարյանը (գիտական ղեկավար՝ Վիգեն Ղազարյան) ներկայացրեց Մատենադարանում կատարված ուսումնասիրությունների հետևանքով իր հստակեցրած 16 համարների ներքո հանգրվանած 15 ժապավենաձև ձեռագիր հմայիլները: Բանախոսության մեջ քննության են առնվել հմայիլների նկարագարդման, բովանդակային, նյութի և այլ մանրամասները: Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի ասպիրանտ Արմենակ Գրիգորյանի (գիտական ղեկավար՝ Վիգեն Ղազարյան) բանախոսության նպատակն էր XIX դարի և XX դարասկզբի հայ պարբերական մամուլի՝ մասնավորապես «Բազմավեպ», «Արարատ» և «Գեղարվեստ» հանդեսների ուսումնասիրության հիման վրա ցույց տալ հայ արվեստաբանության՝ որպես մասնագիտության կայացման գործընթացները:

ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ: *ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի երաժշտության բաժնի գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու Արթուր Ավանեսովը փորձեց սահմանել արդի հայ երաժշտության ընդհանուր ուրվագծերը՝ ժամանակակից երաժշտարվեստի ընդհանուր համատեքստում: Քննության առնելով արդի առաջատար հայ կոմպոզիտորների ստեղծագործությունը՝ հեղինակը բարձրացրեց մի շարք հրատապ հարցեր: Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի դասախոս, արվեստագիտության թեկնածու Տաթևիկ Շախկուլյանը շարադրեց երաժշտական տեսական առարկաների դասավանդման մեթոդիկայի շուրջ իր տեսակետները, առաջ քաշեց ազգային երաժշտության առանձնահատկությունների հիման վրա երաժշտական-տեսական գիտելիքներ ուսուցանելու անհրաժեշտության հարցը: Այն կարևորել է դեռևս Կոմիտասը, որի «Տարրական երաժշտու-*

թիւն» և «Տարրական երաժշտութիւն. տեսական եւ գործնական դասընթաց» դասագրքերը նախատեսել են թե՛ եվրոպական դասական երաժշտության, թե՛ հայ ազգային երաժշտության հիման վրա ուսուցանումը միաժամանակ: Կոմպոզիտոր և դաշնակահար, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի մասնագիտական դաշնամուրային ամբիոնի վարիչ Սուրեն Զաքարյանի «Quasi սոնատինի»՝ կոմպոզիտորի և զեկուցման հեղինակի կատարումների համեմատական վերլուծության հիման վրա կոնսերվատորիայի ասպիրանտ Սուսաննա Ղազարյանը (գիտական ղեկավար՝ Աննա Ասատրյան) հիմնավորեց ստեղծագործության կատարողական մեկնաբանության այլընտրանքային տարբերակների հնարավորությունը: Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ասպիրանտ Լիլիթ Արտեմյանը (գիտական ղեկավար՝ Մ. Կոկժան) ներկայացրեց հայ դաշնամուրային երաժշտության մեջ ատոնալ ոճով գրված մանրանվագները՝ Հրաչյա Մելիքյանի «Շարքը» և Արամ Սաթյանի «Վեց Բագատելը»՝ վերլուծելով երկու ստեղծագործությունների տեխնիկական հիմքերի առանձնահատկությունները՝ կատարողական տեսանկյունից, գեղարվեստական գաղափարին համապատասխան: Կոնսերվատորիայի ասպիրանտ Անի Առուշանյանի (գիտական ղեկավար՝ Միխայիլ Կոկժան) «Վարիացիոն սկզբունքը հայ կոմպոզիտորների դաշնամուրային ստեղծագործության մեջ» զեկուցման մեջ վարիացիոն ձևում գրված և վարիացիոն սկզբունքը որպես գլխավոր արտահայտչամիջոց ունեցող երկերի վերլուծությամբ ի հայտ բերվեցին հայ երաժշտական ավանդույթների բնույթից բխող կոմպոզիցիոն-դրամատուրգիական կարգի մի շարք միտումներ: ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի երաժշտության բաժնի ասպիրանտ, Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի գիտաշխատող Արուսյակ Թամրազյանի (գիտական ղեկավար՝ Ա. Ասատրյան) բանախոսության թեման էր «Արվեստների համակարգման հունական ավանդույթը. ազդեցությունները հայ միջնադարյան տեսական մտքի վրա»: Հեղինակը ներկայացրեց մարդկային ընկալման, ճանաչողության ոլորտների դասակարգումը հին հունական տեսության մեջ գոյաբանական, իմացաբանական և ստեղծագործական ոլորտներում՝ Պլատոնի, Արիստոտելի համակարգերում, դրանց փոխակերպումները նորպլատոնական իմացաբանության և գեղագիտության մեջ (Պտղոմեոս, Պորփյուր), ինչպես նաև ավանդույթն ու մեկնությունները հայ քրիստոնեական միջնադարում: Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ասպիրանտ Անահիտ Մարգարյանի (գիտական ղեկավար՝ Ա. Ասատրյան) զեկուցումը նվիրված էր հայ մեծանուն կոմպոզիտոր Ալեքսանդր Հարությունյանի «Վեց տրամադրություն» շարքին, որը, ի դեպ, այնքան էլ հայտնի չէ մեզանում և շատ հազվադեպ է կատարվում: Այդ ստեղծագործությունը (1976) նվիրված է դաշնակահար և մանկավարժ, պրոֆեսոր Վիլլի Սարգսյանին, որի կատարմամբ հնչել էր առաջին անգամ:

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ: *ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ճարտարապետության բաժնի գիտաշխատող, ճարտարապետության թեկնածու Արեգ Հասրաթյանի զեկուցումը նվիրված էր Հին Հայաստանի մայրաքաղաք Դվինի՝ արդեն IX դ. ավերված Ս. Գրիգոր տաճարի, կաթողիկոսական պալատի և միանավ բազիլիկի ճարտարապետական հորինվածքի գիտական վերակազմությանը: ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ճարտարապետության բաժնի ասպիրանտ Աբբա Ռահիմյանի (գիտական ղեկավար՝ Դավիթ Քերթմենջյան) բանախոսությունը Ռաշտ քաղաքի Շահրդարի հրապարակի «հանրայնացման» հնարավորությունների գնահատման մասին էր: Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանի գիտական բաժնի կրտսեր գիտաշխատող,*

ճարտարապետության թեկնածու Մեսրոպ Մնացականյանն իր ելույթում ներկայացրեց ջրաղացների հատակագծային և ծավալատարածական հորինվածքները և դիտարկեց դրանց ժամանակակից օգտագործման հնարավորությունները: ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ճարտարապետության բաժնի ասպիրանտ Ղազալ Ֆատեհի (գիտական ղեկավար՝ Դ. Քերթմենջյան) զեկուցումը կրում էր «Մշակութային ժառանգության սքանչելիքը» (տեսակետներ Սեմնանի տարածքում զբոսաշրջության զարգացման վերաբերյալ) վերնագիրը:

ԹԱՏՐՈՆ ԵՎ ԿԻՆՈ: *ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի թատրոնի բաժնի գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու Սառա Նալբանդյանը ներկայացրեց փաստագրական թատրոնի նորագույն դրսևորումներից մեկը՝ այսպես կոչված «վերբատիմ» թատրոնը, որն արդի արևմտյան մշակույթի ամենահակասական երևույթներից է: Հիմնվելով փաստաթղթերի և հարցազրույցների վրա՝ «վերբատիմ» պիեսները կարծես հակասում և նույնիսկ քայքայում են մինչ օրս գոյություն ունեցող դրամատուրգիական ձևերը՝ ձևավորելով անգամ նոր դրամատուրգիա: Միևնույն ժամանակ այս շարժումը հետևորդներ է գտնում ողջ աշխարհում՝ մուտք գործելով նաև Հայաստան: ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի սփյուռքահայ արվեստի բաժնի գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու Արսեն Համբարձումովի զեկուցման թեման էին ««Նամուս» (1925) և «Պեպո» (1935) ֆիլմերը՝ որպես ռեալիստական գեղարվեստական ստեղծագործությունների օրինակներ»: Քննության առնելով Բեկնազարովի «Նամուս» և «Պեպո» ֆիլմերը՝ բանախոսը բացահայտեց այն առանձնահատկությունները, որոնք բնորոշ են իրապաշտական գեղարվեստական ստեղծագործությունների բովանդակությանը: Նստաշրջանի աշխատանքներին մասնակցեցին ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Արարատ Աղասյանը, ՀՀ ԲՈՀ-ի նախագահի տեղակալ, բանասիրական գիտությունների դոկտոր Լիլիթ Արզումանյանը, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրենի տեղակալ, արվեստագիտության դոկտոր Աննա Ասատրյանը, ճարտարապետության բաժնի վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ճարտարապետության դոկտոր, պրոֆեսոր Մուրադ Հասրաթյանը, կերպարվեստի բաժնի վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Վիգեն Ղազարյանը, ժողովրդական երաժշտության բաժնի վարիչ, արվեստագիտության թեկնածու Մհեր Նավոյանը, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի առաջատար գիտաշխատողներ՝ արվեստագիտության դոկտոր Մարգարիտա Ռուխկյանը և ճարտարապետության դոկտոր, պրոֆեսոր Դավիթ Քերթմենջյանը, ավագ գիտաշխատողներ՝ արվեստագիտության թեկնածու Արթուր Ավագյանը և ճարտարապետության թեկնածու Վահագն Գրիգորյանը:*

Եզրափակիչ խոսքով հանդես եկավ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրենի տեղակալ, արվեստագիտության դոկտոր Աննա Ասատրյանը: Նստաշրջանն անցավ կառուցողական քննարկումների և հարցադրումների մթնոլորտում: Առաջիկայում կհրատարակվի նստաշրջանի նյութերի ժողովածուն:

ՔԱՄԱԼՅԱՆ Մ. Ա.